

ՀՐԵԱՆԵՐԸ ՄԻԱՆՈՒՄ ԵՆ ՀԱՅԵՐԻՆ՝ ՆՇԵԼՈՒ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԼԻՅԸ

Արթուր Հակոբյանի հատուկ հաղորդագրությունը

Երուսաղեմ

Անցյալ շաբաթ, Եբրայական համալսարանում, հրեա համակիրները միացան Երուսաղեմի հայերին՝ տխուր մի միջազատմամբ նշելու հայոց ցեղասպանության տարելիցը: Ողջ երկրից տարբեր զբաղմունքների տեր մարդիկ, հոգևորականներ ու աշխարհականներ, հայտնվեցին կողք-կողքի՝ հարգանքի իրենց տուրքը մատուցելու Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում զոհված մեկ ու կես միլիոն հայերին:

Այսպիսի երեկո ու մտքերի փոխանակություն կազմակերպվում է ամեն տարի՝ Եբրայական համալսարանի հայագիտական ամբիոնի նախաձեռնությամբ: Հրեական Պասեքի և հայկական Զատիկի պատճառով միջոցառումը, որ սովորաբար տեղի էր ունենում ապրիլի 24-ին, մի քանի օրով հետաձգվեց:

Երեկոյի ամենահուզիչ պահերից էր լուսանկարիչ Գևորգ Գահվեճյանի ելույթը: Նա պատմեց ցեղասպանության զոհ դարձած առանձին անհատների մասին, որոնց թվում իր հայրն էր: Երբ լսարանը ոտքի կանգնեց՝ լռությամբ հարգելու զոհերի հիշատակը, բոլորին կարծես համակել էր նույն միտքը. մինչև ո՞ր կարող է հասնել մարդու հանդեպ մարդու դաժանությունը: 20-րդ դարի առաջին ցեղասպանությանը հետևեցին հրեաների ողջակիզումը և բազմաթիվ ուրիշ՝ մեծ ու փոքր ցեղասպանություններ, որոնք բացառված չեն նաև այսօր: Բնաջնջվում են ամբողջ ընտանիքներ ու համայնքներ՝ միայն իրենց անունների կամ մաշկի գույնի պատճառով:

Երեկոն շարունակվեց՝ «Տէր, ողորմեա»-ի՝ Հայր Գուսան Ալջալյանի տպավորիչ կատարմամբ, որ համահունչ էր տիրող ակնածալից ու տխուր մթնոլորտին: Երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ Մանուկյանին, որ միշտ ներկա էր լինում հայոց ցեղասպանության հիշատակի երեկոներին, այս անգամ փոխարինել էր արքեպիսկոպոս Արիս Ծիրվանյանը: Նա, ինչպես նաև Երուսաղեմի հայ կաթոլիկ համայնքի ղեկավար տիար Ռաֆայել Մինասյանը, շեշտեցին այն հանգամանքը, որ հայոց ցեղասպանության հուշ երեկոն ու հրեաների ողջակիզման հիշատակի օրը նշվում են նույն շաբաթվա ընթացքում:

Եբրայական համալսարանի Հումանիտար գիտությունների ֆակուլտետի փոխդեկան Գիդեոն Շելալը նշեց, որ Հայագիտական ամբիոնը վառ օրինակ է այն փաստի, թե որքան է Եբրայական համալսարանը շահագրգռված՝ սովորելու և ուսուցանելու այլ ժողովուրդների մշակույթներ: Սա մասնավորապես վերբերում է հայերին, որոնց ներկայությունը Սուրբ Երկրում երկու հազար տարվա պատմություն ունի:

Հայագիտական ամբիոնը ղեկավարում է աշխարհի լավագույն հայագետներից մեկը՝ ազգությամբ հրեա Մայքլ Սթոունը: Թերևս քիչ գիտնականներ ունեն նույնքան վաստակ, որքան Սթոունը՝ հայ միջնադարյան գրականության գանձերը միջազգային ասպարեզում հրապարակելու ուղղությամբ: Նրա վերջին աշխատանքներից է Առաքել Սյունեցու «Աղամագրքի» անգլերեն թարգմանությունը, առաջաբանով ու ծանոթագրություններով, որ լույս ընծայեց Օքսֆորդի համալսարանի հրատարակչությունը: Սյունեցու երկում ցայտուն կերպով ներկայացված է հայերի՝ քրիստոնեությունն առաջինը պաշտոնապես ընդունած ժողովրդի՝ դարձի գալու և հոգեկան կատարելության հասնելու ճգնաժամը:

Պրոֆ. Սթոունն իր ելույթի ընթացքում նշեց, որ գեղասպանությունները, բացի ժողովուրդներ բնաջնջելուց, ոչնչացնում են նաև մշկույթներ: «Մեր Հայագիտական ամբիոնի նպատակն է՝ փայփայել ու սովորեցնել հայոց լեզուն, պատմությունն ու մշակույթը՝ մեկ անգամ ևս հաստատելու համար դրանց հարատևությունը»:

Իսրայելը դեռ պաշտոնապես չի ճանաչել հայերի գեղասպանությունը, ինչն այդ պետության երկակի քաղաքական առաջնահերթությունների արտահայտություն է: Ժամանակն է, ինչպես նշեց Իսրայելում Հայաստանի Հանրապետության Պատվո հյուպատոս Յուակ Մոմջյանը, որ Իսրայելը կատարի իր այդ բարոյական պարտքը:

Ներկաների թվում էր Իսրայելի Քնեսետի (Խորհրդարանի) անդամ Ջենեվ Էլքինը՝ «Իսրայել-Հայաստան» խորհրդարանական խմբակցության ղեկավարը: Նա արձանագրեց, որ Իսրայելի պաշտոնական դիրքորոշման մեջ փոփոխություն է նկատվում, ինչը հաստատվում է այս տարի Քնեսետի օրակարգում, առաջին անգամ, հայերի գեղասպանության ճանաչման հարցի ընգրկմամբ: Էլքինը հայտարարեց, թե խնդիրը քննարկվելու է համապատասխան հանձնաժողովում և հույս հայտնեց, թե հարցն ի վերջո կստանա իր արդար լուծումը:

Թեմայի շուրջն առավել սուր արտահայտվեց գեղասպանությունների հայտնի գիտակ ու դրանց դեմ մշտապես մարտնչող մտավորական, պրոֆ. Իսրայել Չարնին: Նա դարձյալ շեշտեց Իսրայելի պաշտոնական դիրքորոշման երկակիությունը՝ անդրադառնալով նաև Թուրքիայում Իսրայելի դեսպանի արած «տարօրինակ» հայտարարություններին: Չարնին զգուշացրեց, թե ինչ վտանգներ կարող են լինել հայերի կամ հրեաների կողմից իբրև «բացառիկ զոհեր» ներկայանալու նկրտումները: Հայոց գեղասպանությունը նաև այլ քրիստոնյա փոքրամասնությունների գեղասպանություն էր, իսկ Հոլոքոսթի ընթացքում նացիստները հրեաների հետ միասին կոտորեցին նաև գնչուների ու այլ ժողովուրդների: Նա եզրափակեց, որ Իսրայելի պաշտոնական դիրքորոշումը միայն վրդովմունքի տեղիք չի տալիս, այլ վկայում է այն մասին, թե ժամանակն է որդեգրելու այնպիսի ճկուն քաղաքականություն, որ չլսաթարի երկրի բարոյական կերպարը և միաժամանակ հաշվի առնի Իսրայելի աշխարհագրական դիրքը: